# Աստոմին® Բեյբի գել ատամների ծկթման համար

## Օգտագործման հրահանգ

- ✓ Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելը բիոադհեզիվ գել է՝ նախատեսված պերօրալ օգտագործման համար: Այն արագ ստեղծում է անտեսանելի շերտ, որը պաշտպանում է լնդերը տհաճ զգացումից և ցավից: Նրա բնական բաղադրիչները օգնում են մեղմացնել ցավն ու կարմրությունը ախտահարված հատվածներում:




- ✓ Ապլիկատորը ունի սիլիկոնե ելուստներ, որոնք մեղմ մերսում են լնդերը՝ մեղմացնելով տհաճության զգացումը և այն ախտանիշները, որոնցով ուղեկցվում է ատամների ծկթման գործընթացը:

- ✓ Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելը չի պարունակում տեղային անզգայացնողներ, դեղամիջոցներ, սպիրտ և շաքար:
- ✓ Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելը չի առաջացնում այրոցի զգացում քսելիս և ունի բանանի հաճելի համ:

## Օգտագործման ձևը

Բավարար քանակությամբ գելը տարածեք ախտահարված ամբողջ հատվածի վրա՝ ապլիկատորի օգնությամբ մեղմ մերսելով լնդերը:

Ցանկալի է գելը օգտագործել ուտելուց հետո և երեխայի քնից առաջ, ինչը կնպաստի շերտի առաջացմանը և կերկարացնի ցավի մեղմացման ազդեցությունը երեխաների մոտ: Օգտագործել ըստ անհրաժեշտության: Յուրաքանչյուր օգտագործումից հետո փակել պտուտակային կափարիչը: Հեռացնել բոլոր մնացորդները, որոնք կարող են խանգարել հաջորդ կիրառման ժամանակ:

## Բաղադրությունը

Ջուր, պոլիվինիլպիրոլդոն (PVP), մալտոդեքստրին, պրոպիլեն գլիկոլ, PEG-40 գերչակի հիդրոգենացված յուղ, Ալոե վերա (Aloe barbadensis), քսանտանայինն բուսախեժ, բուրավետիչ, կալիումի սորբատ, նատրիումի բենզոատ, ԷԴՏԱ դինատրիումական աղ, նատրիումի հիալուրոնատ, քսիլիտ, ցետիլպիրիդինիումի քլորիդ, գլիցիրիզինաթթու, շաֆրան (Crocus sativus)

## Ուշադրություն

Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելի յուրաքանչյուր պարկուճ պետք է կիրառել միայն մեկ հիվանդի համար՝ բացառելու ապլիկատորի և գելի խաչաձև աղտոտումը: Ցանկացած բաղադրիչի նկատմամբ գերզգայունություն ունեցող հիվանդներին հակացուցված է Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելի օգտագործումը:

**Նախազգուշացում և նախազգուշական միջոցներ**

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Միայն մեծերը կարող են քսել բժշկական արտադրանքը երեխաներին:

Այս բժշկական արտադրանքը խաղալիք չէ: ԵՐԲԵ՛Ք մի տվեք այն երեխայի ձեռքը: Կա շնչահեղձության վտանգ:

Օգտագործելուց առաջ ստուգե՛լ բժշկական արտադրանքի ամբողջականությունը: Գելի օգտագործման ընթացքում համոզվել, որ ապլիկատորի գլխիկի որևէ մասեր պատահաբար իրարից չեն առանձնացել: Եթե ապլիկատորի գլխիկի մասերը իրարից պոկվել են, դադարեցնե՛լ օգտագործումը և չփորձե՛լ կպցնել պոկված մասը:

Չօգտագործել բժշկական արտադրանքը գելը վերջանալուց հետո:

Չօգտագործել պիտանելիության ժամկետի ավարտից հետո, չօգտագործել նաև եթե պարկուճը վնասված է, և կա արտահոսք: Պահել սենյակային ջերմաստիճանում, ջերմության աղբյուրներից հեռու և չսառեցնել:

### Պահել երեխաների համար անհասանելի վայրում




### Պարունակություն

10 մլ

### Արտադրող

Ալիանս ֆարմա Սրլ,
Վիալե Ռեստելի 5,
20124 Միլան, Իտալիա

### Տարածող ընկերություն

Բեռլին-Խեմի ԱԳ (ՄենարինիԳրուպ),
Գլինիքեռ Վեգ 125,
12489 Բեռլին, Գերմանիա